ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՀԱՅԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՋՈՒԼԻԵՏԱ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Ջուլիետա Խաչատրյանս, աշխատելով որպես ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության փորձագետ, 2024 թվականի հուլիսի 8-ից հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- իրականացրել եմ տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազայի ստեղծման, պարբերաբար թարմացման աշխատանքներ, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների և ռիսկայնությունը որոշող չափանիշների՝ սահմանելով, բացահայտելով և վերլուծելով Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառների ռիսկերը,
- իրականացրել եմ խախտումների պարբերականության, խախտումների վերացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ տվյալների բազայի ձևավորման և պարբերաբար թարմացման աշխատանքներ, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության դասակարգման աշխատանքներ ըստ տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև հսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտներ,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտներում ռիսկի գնահատման և արդյունքների վերլուծության աշխատանքներ,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից տնտեսավարող սուբյեկտներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների

արդյունքների հավաքագրում և դրա հիման վրա սահմանված մեթոդաբանությամբ ռիսկերի հետագա գնահատման աշխատանքներ,

- իրականացրել եմ կառուցվածքային ստորաբաժանումների և շահագրգիռ պետական կառույցների միջև Տեսչական մարմնի կողմից իրականացվող պետական վերահսկողության արդյունքների հիման վրա ռիսկի կառավարման և դրանց վերաբերյալ տեղեկատվության փոխանակման աշխատանքներ,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների տվյալների, ինչպես նաև Ոլորտի վիճակագրական տեղեկատվական բազաների ստեղծման և վարման աշխատանքներ,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների դասակարգումը ըստ ռիսկայնության և վերջինիս հիման վրա ստուգումների տարեկան ծրագրի կազմման աշխատանքներ,
- իրականացրել եմ ստուգումների կազմակերպման, ստուգումների (այդ թվում Ռիսկի վրա հիմնված) հաշվառման հետ կապված համապատասխան ձևաթղթերի հանձնարարագրերի, հրամանների, ակտերի, որոշումների, կարգադրագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի կազմման, ստուգման արդյունքների հաշվառման աշխատանքներ,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, պահպանման և դրանց հիման վրա Ոլորտի վիճակագրության վարման հետ կապված աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում սահմանված ժամկետում և կարգով հաշվարկ-հաշվետվությունների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկատվություններ պարունակող ձևերի ներկայացման աշխատանքներ համապատասխան պետական մարմիններին և Տեսչական մարմնի ղեկավարին,
- կազմել եմ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ, ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՋՈՒԼԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ՝

Հայկ Եղիազարյան